AMERICAN UNIVERSITY OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

10/09/91

375093, Երեւան,
Վատուտինի փող. 123,
Օտար լեզուների ինստիտուտի ռեկտոր
տիկին Իվետա Առաքելյանին

Հարգելի տիկին Առաքելյան,

Կուզեի Ձեզ տեղեկացնել, որ մեր ամերիկյան դասախոսներից պրն. Ջիմի Հարրիսը անգլերենի ձայնագիտության (phonetics) մասնագետ է, եւ ինքը ցանկանում է անգլերեն լեզվի եւ ձայնագիտության դասարան բացել երեկոները երկուշաբթի եւ ուրբաթ օրերին մեր համալսարանում:

Այս դասարանը անվճար է, եւ բաց է միայն անգլերեն լեզվի ուսուցիչների համար:

Ուստի եթե Ձեր դասախոսները կցանկանան մասնակցել, պիտի խնդրենք, որ ներկայանան Մարգարետ Կամաջյանին, հեռախոս՝ 27-10-85, հասցե՝ Մարշալ Բաղրամյանի պող. 40, առաջին հարկ, սենյակ համար 17:

Հուսով ենք, որ այս առիթից օգտվելով, անգլերենի ուսուցիչները պիտի կարգացնեն իրենց անգլերենի հնչումը եւ առոգանությունը:

Մնամ հարգանքով,

Միհրան Աղբաբյան,
Նախագահ, Հայաստանի
Ամերիկյան Համալսարան

40 Marshall Bagramian Street
Yerevan, 375019, Armenia
U.S.S.R.